ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար տպագրական և առաքման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՀՄԱԾՁԲ-22/03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «08» նոյեմբերի 2022թ.
Ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ **ԳՊ/ԳԱՊ**)

հանձնաժողովի անդամներ՝

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ)**

Կարինե Ղազարյան՝ Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնում սպասարկող՝ տեխնիկական աշխատանքների (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ)**

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/Միմ)**

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ՀՄԱԾՁԲ-22/03» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 2022թ.-ի նոյեմբերի 08-ին, ժամը 15:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գնման գնի վերաբերյալ.

Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց, որ գնման հայտով սահմանված է ընթացակարգը կազմակերպելու տարվա ընթացքում նմանատիպ ծառայությունների ձեռքբերման նպատակով կնքված պայմանագրով սահմանված մեկ միավոր գինը.

Չափաբաժնի համարը	**Չափաբաժնի անվանումը**	**Նմանատիպ ծառայությունների մեկ միավորի ձեռքբերման գինը (ՀՀ դրամ)**	**Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ)**
1	Տպագրական և առաքման ծառայություններ	34.907	5 934 190

3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	**Մասնակցի գործունեության հասցեն**
«ՎԵՔԹՍ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Սասունցի Դավթի 70/1շ. բն1
«ՅԱՍՈՆ» ՍՊԸ	Կոտայքի մարզ, գ. Ձորաղբյուր, Սևանի 4

Ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի ուսումնասիրության նպատակով հանձնաժողովը որոշեց նիստը հետաձգել և հաջորդ նիստը հրավիրել 2022թ. նոյեմբերի 09-ին՝ ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Տիգրան Զեյնալյան

_____ Անդրանիկ Աբգարյան

_____ Վարդան Կարապետյան

_____ Կարինե Ղազարյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դավիվանյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար տպագրական և առաքման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՀՄԱԾՁԲ-22/03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«09» նոյեմբերի 2022թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ **ԳՊ/ԳԱՊ**)

հանձնաժողովի անդամներ՝

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

Կարինե Ղազարյան՝ Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնում սպասարկող՝ տեխնիկական աշխատանքների (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ)**

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/ՄԻՄ)**

Բացակայում էր՝

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ)**

1. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում «ԴԴ-ՀՄԱԾՁԲ-22/03» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

«ՎԵՔԹՍ» ՍՊԸ-ի և «ՅԱՍՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

2.1. **«ՅԱՍՈՆ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

2.2. **«ՎԵՔԹՍ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում առկա.

- հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված N 1), գնային առաջարկը (Հավելված 2) կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,
- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված 1.2) (այսուհետ՝ Հայտարարագիր) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ Հայտարարագրի «1.13. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)» ենթաբաժնի «1.13.1. Մասնակցության չափը (%)» և «1.13.2. Մասնակցության տեսակը» դաշտերում կատարված են համապատասխան նշումներ, սակայն «ա.» կետում որևէ նշում կատարված չէ:

Միաժամանակ՝

- Հայտարարագիրը բաղկացած է 6 էջից, այն դեպքում, երբ «1.3. Հայտարարագրի ներկայացումը» ենթաբաժնի «1.3.2. Հայտարարագրի էջերի քանակը» դաշտում Հայտարարագրի էջերի քանակը նշված է «7»,
- անհրաժեշտ է ճշգրտել Հայտարարագրի «1.11. Անձի հաշվառման հասցեն» ենթաբաժնի «1.11.2. Համայնքը» դաշտում նշված տեղեկատվությունը,
- հրավերով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի լրացման կարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջների համաձայն՝ Հայտարարագրի «1.15. Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները» ենթաբաժնի **«1.15.3. Ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպության իրական շահառուն հանդիսանում է պաշտոնատար անձ կամ նրա ընտանիքի անդամ»** դաշտի տեղեկատվությունը վերաբերում է ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձանց, ուստի հաշվի առնելով, որ մասնակցի կողմից լրացված են Հայտարարագրի «1.13. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը **(բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)**» ենթաբաժնի համապատասխան դաշտերը, տվյալ դեպքում Հայտարարագրի **1.15.3.-րդ** դաշտում կատարված նշումն ավելորդ է:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Մասնակիցների առաջարկած գներն են.

ՀՀ դրամ

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	«ՎԵՔԹՍ» ՍՊԸ			«ՅԱՍՈՆ» ՍՊԸ		
		Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	Տպագրական և առաքման ծառայություններ	11 900 000	-	**11 900 000**	8 483 000	1 696 600	**10 179 600**

4. Հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2022թ. նոյեմբերի 11-ին, ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ՀՄԱԾՁԲ-22/03» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.9 կետի պահանջներով՝ հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել «ՎԵՔԹՍ» ՍՊԸ-ին, առաջարկելով մինչև սույն թվականի **նոյեմբերի 10-ը ներառյալ** շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Տիգրան Զեյնալյան

_____ Անդրանիկ Աբգարյան

_____ Կարինե Ղազարյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դավիդյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար տպագրական և առաքման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՀՄԱԾՁԲ-22/03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «11» նոյեմբերի 2022թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ **ԳՊ/ԳԱՊ**)

հանձնաժողովի անդամներ՝

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ)**

Կարինե Ղազարյան՝ Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնում սպասարկող՝ տեխնիկական աշխատանքների (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ)**

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/Մհմ)**

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ՀՄԱԾՁԲ-22/03» ծածկագրով ընթացակարգի շրջանակում «ՎԵՔԹՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման և հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ.

«ՎԵՔԹՍ» ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

«ՎԵՔԹՍ» ՍՊԸ-ի և «ՅԱՍՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տեղեկություն՝ «ԴԴ-ՀՄԱԾՁԲ-22/03» ծածկագրով ընթացակարգի շրջանակում առաջարկված գների նվազեցման նպատակով միաժամանակյա բանակցություններ վարելու անհրաժեշտության մասին.

Հաշվի առնելով ընթացակարգի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա կազմակերպված լինելու հանգամանքը, ինչպես նաև այն, որ ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների՝ «ՎԵՔԹՍ» ՍՊԸ-ի և «ՅԱՍՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցում են գնվելիք ծառայությունների գնման հայտով սահմանված գնման գինը՝ անհրաժեշտություն է առաջանում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների՝ «ՎԵՔԹՍ» ՍՊԸ-ի և «ՅԱՍՈՆ» ՍՊԸ-ի հետ վարելու միաժամանակյա բանակցություններ՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն:

Հանձնաժողովը որոշեց.

նիստը կասեցնել և միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով հաջորդ նիստը հրավիրել 2022թ. նոյեմբերի 15-ին՝ ժամը 11:00-ին, Դատական դեպարտամենտի վարչական շենքում (ք. Երևան, Կորյունի 15/1, 4-րդ հարկ): Ընդ որում, բանակցությունները կվարվեն միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով հրավիրվող նիստին ներկա բոլոր մասնակիցների (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչների) հետ: Բանակցությունների համար վերջնաժամկետ է սահմանվում 5 (հինգ) րոպե:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Տիգրան Զեյնալյան

_____ Անդրանիկ Աբգարյան

_____ Վարդան Կարապետյան

_____ Կարինե Ղազարյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դավիթյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

Դատական դեպարտամենտի կարիքների համար տպագրական և առաքման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՀՄԱԾՁԲ-22/03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«15» նոյեմբերի 2022թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ **ԳՊ/ԳԱՊ**)

հանձնաժողովի անդամներ՝

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ)**

Կարինե Ղազարյան՝ Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնում սպասարկող՝ տեխնիկական աշխատանքների (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ)**

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/Մհմ)**

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ՀՄԱԾՁԲ-22/03» ծածկագրով ընթացակարգի ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների հետ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու մասին.

Ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից «ՅԱՍՈՆ» ՍՊԸ-ն ներկա է գտնվել միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով հրավիրված նիստին:

Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին՝ «ՅԱՍՈՆ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված գինն է.·

ՀՀ դրամ

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	**Տպագրական և առաքման ծառայություններ**	8 478 750	1 695 750	**10 174 500**

2. Տվյալներ՝ ընտրված մասնակցի վերաբերյալ.

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «զ.» պարբերությունը, ինչպես նաև «ԴԴ-ՀՄԱԾՁԲ-22/03» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.7 կետի «զ.» պարբերությունը՝ հանձնաժողովը որոշեց բանակցությունների արդյունքում ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ **«ՅԱՍՈՆ» ՍՊԸ-ին, հայտարարել ընտրված մասնակից**:

«ԴԴ-ՀՄԱԾՁԲ-22/03» ծածկագրով ընթացակարգի ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտ ներկայացրած մյուս մասնակցի՝ «ՎԵՔԹՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է գնվելիք ծառայությունների գնման գինը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է),
- գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Տիգրան Զեյնալյան

_____ Անդրանիկ Աբգարյան

_____ Վարդան Կարապետյան

_____ Կարինե Ղազարյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
պայմանագիր կնքելու որոշման մասին

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ՀՄԱԾՁԲ-22/03»**

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար տպագրական և առաքման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՀՄԱԾՁԲ-22/03» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին տեղեկատվությունը՝

Գնահատող հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 5 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները: Համաձյան որի՝

Չափաբաժին 1:

Գնման առարկա են հանդիսանում՝ **Տպագրական և առաքման ծառայությունները**:

Հ/Հ	**Մասնակցի անվանումը**	**Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր** /համապատասխանելու դեպքում նշել “X”/	**Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր** /չհամապատասխանելու դեպքում նշել “X”/	**Անհամապատասխանության համառոտ նկարագրույթուն**
1	«ՎԵՔԹՍ» ՍՊԸ	X		
2	«ՅԱՍՈՆ» ՍՊԸ	X		

Մասնակիցների զբաղեցրած տեղերը	**Մասնակցի անվանումը**	**Ընտրված մասնակից** /ընտրված մասնակցի համար նշել “X”/	**Մասնակցի առաջարկած գին /առանց ԱՀՀ, ՀՀ դրամ/**
1	«ՅԱՍՈՆ» ՍՊԸ	X	8 478 750*
**	«ՎԵՔԹՍ» ՍՊԸ		11 900 000

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ՝ հրավերին համապատասխանող հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ՀՄԱԾՁԲ-22/03» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Գայանե Դադիվանյանին:

Այլ անհրաժեշտ տեղեկություններ՝

**Նշված է սահմանված կարգով կազմակերպված բանակցությունների արդյունքում ներկայացված գնային առաջարկը: «ՅԱՍՈՆ» ՍՊԸ-ն հայտարարվել է ընտրված մասնակից՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «զ.» պարբերությունը, ինչպես նաև «ԴԴ-ՀՄԱԾՁԲ-22/03» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.7 կետի «զ.» պարբերությունը:*

***Ներկայացված գնային առաջարկը գերազանցում է սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման գինը:*

Հեռախոս՝ **010-511-783**:

Էլեկտրանային փոստ՝ **ddgnumner@mail.ru**:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**